ՀՏԴ 94 (479.243)

Պատմություն

Նելլի Մինասյան
Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան
Համաշխարհային պատմության և նրա դասավանդման
մեթոդիկայի ամբիոնի դոցենտ
minasyan.nelly@mail.ru

ԹՈՒՐՔ-ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՊԱՆԹՅՈՒՐՔԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ԱՐՑԱԽԸ (1917-1918 ԹԹ.)

Օսմանյան կայսրությունն Առաջին համաշխարհային պատերազմ մտավ պանթյուրքական ծրագրերով, որոնց նպատակն էր միավորել թյուրքական ժողովուրդներին և ստեղծել Մեծ Թուրան պետությունը: Երիտթուրքերը, առաջնորդվելով այս ծրագրերով, առաջին հերթին ենթադրում էին գրավել Այսրկովկասը, դուրս գալ Կասպից ծովի ավազան ու Կենտրոնական Ասիա: Հետևաբար պատերազմի սկզբից թուրքերի համար առանձնահատուկ նշանակություն ուներ Այսրկովկասը:

1917 թ. հոկտեմբերին Ռուսաստանում տեղի ունեցած հեղափոխության հետևանքով Այսրկովկասում իրադրությունն արմատապես փոխվեց: Մինչ այդ թուրքերը չէին կարողացել անմիջական կապեր հաստատել տարածաշրջանի թյուրք բնակչության հետ, ավելին ռուսական զորքից ծանր պարտություններ էին կրել: Հեղափոխությունից հետո ստեղծված իրավիճակը նպաստավոր պայմաններ ստեղծեց թուրքերի համար, քանի որ նրանք հնարավորություն ստացան համագործակցել ադրբեջանական մուսավաթականների հետ: Վերջինները նույնպես կիսում էին պանթյուրքական գաղափարները և ձգտում էին միավորվել Օսմանյան կայսրության հետ, ուստի մեծ ոգևորությամբ ընդունեցին համագործակցության փաստը: Թուրք-ադրբեջանական համագործակցության համար նպաստավոր պայմաններից էր նաև այն, որ ռուսական զորքը լքում էր ռազմաճակատը, որն էլ անմիջապես զբաղեցնում էին թուրքական զորքերը: Ընդ որում թուրքերը խախտեցին Բրեստ-Լիտովսկի պայմանագրի կետերը և գրավեցին նախկին Ռուսական կայսրության կազմում գտնվող տարածքները, մասնավորապես խոսքը վերաբերվում է Կարսի մարզին ու Բաթումին: Կարևոր հանգամանք էր նաև ռուսական զորքի թողած զենքի պաշարների առկայությունը, որոնք հիմնականում յուրացնում են ադրբեջանցիները և հետագայում օգտագործում արցախահայության դեմ: Այդու, իրական նախադրյալներ են ստեղծվում թուրք-ադրբեջանական համագործակցության համար, ուստի երկու կողմերն էլ մեծ կարևորություն են տալիս պանթյուրքիզմի գաղափարներին: Ըստ էության, թուրք-ադրբեջանական համագործակցության խորացումն ու ընդլայնումը կենթադրեր պանթյուրքիզմի ծրագրի առաջին փուլի իրականացումը:

Վերոնշյալ իրադարձությունները, մասնավորապես հոկտեմբերյան հեղափոխությունը և դրա հետևանքով Այսրկովկասում ստեղծված իրադրությունն իր ազդեցությունը թողեց նաև Արցախի վրա: Արցախը հայտնվեց թուրք-ադրբեջանական համագործակցության և ենթադրվող միության ստեղծման կենտրոնում, հետևաբար նրանց համար երկրամասը ձեռք բերեց կարևոր նշանակություն: Այս շրջանում մուսավաթականները ներկայացրեցին իրենց պահանջները հայկական տարածքների նկատմամբ, որը բացի Արցախից ներառում էր նաև Զանգեզուրը և Նախիջևանը: Հարկավոր է փաստել, որ Արցախն այն տարածքն էր, որն ուղղակի խոչընդոտում էր թուրքերին միավորվել ադրբեջանցիների հետ, հետևաբար այս երկու կողմերը համատեղ ճակատ ստեղծեցին՝ փորձելով իրենց ենթարկել Արցախը:

Արցախն այս շրջանում գտնվում էր քաղաքական ու տնտեսական ծանր պայմաններում, իսկ թուրք-ադրբեջանական ծրագրերն ու ոտնձգությունները ուղղակիորեն վերաբերվում էին արցախահայության անվտանգությանը: Այսինքն՝ պանթյուրքական ծրագրերի առաջ քաշման և իրականացման պայմաններում վտանգված էր արցախահայության ֆիզիկական գոյությունը: 1917 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին Արցախում իշխանություն գրեթե չկար: Միակ տեղական իշխանական մարմինը 72 անդամներից բաղկացած գործադիր կոմիտեն էր, որը անգործության էր մատնված: Ստեղծված վիճակից օգտվում էր թյուրք-թաթարական բնակչությունը՝ զբաղվելով ավազակությամբ, թալանով ու կոտորածով: Բացի այդ, համարցախյան իշխանության

բացակայությունը նպաստավոր պայմաններ էր ստեղծում թուրք-ադրբեջանական պանթուրքական ծրագրերի համար: Մյուս կողմից ստեղծված պայմաններում խորանում էր Արցախում առկա տնտեսական ու քաղաքական ճգնաժամը, որը ևս նպաստավոր վիճակ էր ստեղծում թուրք-ադրբեջանական ծրագրերի տեսանկյունից: Անշուշտ, արցախահայության ներկայացուցիչները մտածում էին ստեղծված դրության մասին, կանխագուշակում էին սպառնացող վտանգը, ուստի ձեռնամուխ եղան որոշակի գործողությունների իրականացմանը: Առաջին քայլը եղավ այն, որ 1917 թ. նոյեմբերին զավառի նախկին կոմիսար Լ. Վարդապետյանի նախաձեռնությամբ հավաքվեցին մի շարք կուսակցությունների ու քաղաքական կազմակերպությունների ներկայացուցիչները՝ Արցախում ստեղծված իրադրությունը քննարկելու համար: Որոշվեց ստեղծել տեղական իշխանության ժամանակավոր մարմին՝ «Հայ հեղափոխական կուսակցությունների ու կազմակերպությունների Ղարաբաղի ժամանակավոր խորհուրդը», որը կարճ անունով կոչվեց «Միջկուսակցական բյուրո»: Խորհրդի կազմում ընտրվեց 14 հոգի՝ հինգ դաշնակցական, երեք մենշևիկ, երեք բոլշևիկ, երեք էսէռ: Խորհրդի նախագահ ընտրվեց Հայ հեղափախական դաշնակցության անդամ Հայրապետ Մուսայելյանը: Թեև Ղարաբաղի ժամանակավոր խորհրդի գործունեությունը սահմանափակվում էր Շուշի քաղաքի շրջանակներով, սակայն այն կարևոր նշանակություն ուներ, քանզի Արցախում պետականության կառուցման գործընթացի սկիզբն էր հանդիսանում: Հարկավոր է նշել, որ Դիզակ, Խաչեն, Վարանդա և Ջրաբերդ գավառները մնացել էին առանց իշխանության: Ազգային կոմիտե ստեղծեցին նաև Շուշիի թյուրք բնակչությունը, ամենայն հավանականությամբ փորձելով մասը կազմել վերոնշյալ գործընթացին:

Չնայած այս ձեռնարկումներին՝ Արցախում շարունակում էր տիրել անիշխանությունը, ուստի Միջկուսակցական բյուրոում և մուսուլմանների ազգային կոմիտեում քննարկվեց Ազգային կոմիտեի հարցը և որոշվեց լուծարել Ղարաբաղի գործադիր կոմիտեն և ստեղծել նոր աշխատունակ մարմին: 1917 թ. դեկտեմբերի 20-ին հրավիրվեց Ղարաբաղի գործադիր կոմիտեի արտահերթ նիստ: Գործադիր կոմիտեն հրաժարական տվեց և ստեղծվեց Միջազգային կամ Ազգամիջյան կոմիտեն, որի կազմի մեջ մտան 13 հոգի՝ վեց հայ, վեց մուսուլման և մեկ չեզոք անձ որպես ղեկավար: Կոմիտեի հիմնական խնդիրն էր կարգավորել ազգամիջյան հարաբերությունները, սակայն դա նրան չի հաջողվում, ավելին՝ հետագայում ազգամիջյան հակասություններն ավելի են խորանում:

Ինչպես գիտենք 1918 թ. մայիսի 27-ին հռչակվեց Ադրբեջանի անկախությունը և Արցախին սպառնացող վտանգը դարձավ ավելի իրական: Մուսավաթականները փորձեցին կյանքի կոչել պանթուրքական ծրագրերը, այն է՝ բռնի կերպով Արցախը միացնել Ադրբեջանին և այդպիսով անմիջական կապ հաստատել Թուրքիայի հետ: Մյուս կողմից այս նույն ժամանակաշրջանում թուրքերը ևս, առաջնորդվելով պանթուրքական ծրագրերով, փորձում էին իրենց ենթարկել Հայաստանը: Հարկավոր է նշել, որ Թուրքիային ձեռնտու էր Այսրկովկասում թյուրքական պետության գոյությունը՝ պանթուրքական նպատակներն իրականացնելու համար: Նման պետության առկայությունը Թուրքիային հնարավորություն կտար միշտ հետամուտ լինել պանթուրքական ծրագրերին: Պատահական չէր, երբ թուրքական զորքը հեռացավ Այսրկովկասից ադրբեջանցիներին թողեց զենքի հսկայական պաշարներ, ինչպես նաև բարձրաստիճան սպաների ու հրամանատարների (առավել հայտնի էին Նուրի փաշան, Խալիլ փաշան և Քյազիմ բեյը) ադրբեջանակական մարտունակ բանակ ստեղծելու նպատակով:

Ստեղծված իրավիճակում 1918 թ. հուլիսի 16-ին ինքնալուծարվեց Միջկուսակցական բյուրոն և նրա փոխարեն ստեղծվեց «Ղարաբաղի հայ ժողովրդական ժամանակավոր կառավարությունը» («Կոմիսարների խորհուրդ»), որի նախագահ ընտրվեց Լեռնային Ղարաբաղի Հայ հեղափոխական դաշնակցության ղեկավար Հայրապետ Մուսայելյանը: Կոմիսարների խորհուրդը հիմնադրեց տեղական մարմիններ, իսկ նրա ներկայացուցյիչներն աշխատանքներ էին տանում արցախահայությանն առաջին համագումարին նախապատրաստելու համար:

1918 թ. հուլիսի 22-ին Շուշիի թեմական դպրոցի դահլիճում գումարվեց արցախահայության առաջին համագումարը, որի աշխատանքները շարունակվեցին մինչև հուլիսի 28-ը: Այս համագումարը տարբեր առումներով բացառիկ երևույթ էր արցախահայության կյանքում: Նախևառաջ Արցախը հայտարարվեց առանձին վարչաքաղաքական միավոր: Ընտրվեց Ազգային խորհուրդ և կոալիցիոն սկզբունքով կազմվեց նոր կառավարություն: Վերջինը ստացավ «Ղարաբաղի ժողովրդական կառավարություն» անունը: «Ղարաբաղի ժողովրդական կառավարությունը» հանդիսանում էր Արցախում գործող իշխանական ամենաբարձր մարմինը, որի

իրավասությունը տարածվում էր ամբողջ գավառի վրա: Հաջորդ կարևոր իրադարձությունն այն էր, որ հուլիսի 24-ին ընդունվեց «Ղարաբաղի ժողովրդական կառավարության» հռչակագիրը, որտեղ շարադրված էին նորաստեղծ պետական իշխանության հիմնական խնդիրները: Հռչակագրի ընդունումով ավարտվեց Արցախի ժողովրդական կառավարության կազմավորման գործընթացը: Փաստորեն այս իրադարձությամբ ավարտվեց Ղարաբաղի հայկական անկախ իշխանության կազմավորման երկարատև ու դժվարին գործընթացը: Այս քայլով արցախահայությունը հաստատում էր իր ինքնուրույնությունը և պետականություն ունենալու ձգտումը:

Այսպիսով, 1917-1918 թթ. Արցախը կարևոր տեղ էր զբաղեցնում թուրք-ադրբեջանական պանթյուրքական ծրագրերում, քանի որ հանդիսանում էր պատվար երկու կողմերի միավորման համար: Արցախահայությունը այս ծրագրերին պատասխանեց երկու հիմնական առումով. առաջին՝Արցախում պետականության հիմքերը դնելով, երկրորդ՝ ձեռնամուխ լինելով ինքնապաշտպանության կազմակերպմանը: Արցախահայության այս ձեռնարկումները խոչընդոտ հանդիսացան թուրք-ադրբեջանական գործողությունների համար: Հետագայում պանթյուրքական ծրագրերի չիրականանալն արդեն կապվեց տարածաշրջանի խորհրդայնացման հետ, որի պայմաններում Թուրքիան անկարող էր որևէ բնույթի հարաբերություններ հաստատել թյուրքական ժողովուրդների հետ: Սակայն քննարկվող ժամանակաշրջանում պանթյուրքիզմի հաջողություններից կարելի է համարել Ադրբեջանի որպես պետության ստեղծումը և այդ փաստի ընդունումը տարածաշրջանի մյուս ուժերի կողմից: Կարծում ենք այս փուլում արցախահայությունը լուծեց իր առջև դրված խնդիրները՝ կանխորոշելով իր գոյության ապագա ուղին, այն է ստեղծել պետականություն և ապավինել դրան: Այսու, 1917-1918 թթ. արցախահայությունը կարողացավ դիմակայել պանթյուրքական ծրագրերին և պահպանել երկրամասն ու ազգային ինքնությունը: